

# Փոքրիկ Նարեի խնդիրը

Ժամանակի սահմանափակում՝ 0.3 վայրկյան  
Հիշողության սահմանափակում՝ 128 MB  
Կշիռը՝ 100 միավոր

## Շարադրանք

Փոքրիկ Նարեն հաճախում է մանկապարտեզ: Այնտեղ նա խորանարդիկների միջոցով սովորում է թվանշանները և թվերը: Նարեն ունի երեք խորանարդիկ, որոնց նիստերի վրա թվանշաններ են գրված: Խորանարդիկներն իրար կողք դնելով նա կազմում է տարբեր եռանիշ թվեր: Պահանջվում է գրել ծրագիր պարզելու համար, թե առավելագույնը ինչ թիվ կարող է ստանալ Նարեն, եթե տրված են խորանարդիկների վերևի նիստերի վրա գրված երեք թվանշանները:

## Մուտքային տվյալներ

Տրված են իրարից մեկական բացատով անջատված երեք թվանշաններ: Երաշխավորվում է, որ թվանշաններից առնվազն մեկը զրո չէ:

## Ելքային տվյալներ

Արտածել մեկ թիվ՝ մեծագույն թիվը, որ կարելի է կազմել տրված երեք թվանշաններով:

## Օրինակ

Մուտք	Ելք
0 1 0	100
2 3 1	321